նոյց Տիբերի կայսեր զխաչաւոր յարութիւն Փրկչին մերոյ և զԱստուածութիւն նորին, նոյնպէս յայտնի երեւեցաւ 'ի նախընթաց թղթէն Յակոբայ, սակայն և ինքն Տիբեր վկայէ 'ի թղթին իւրում առ Արգար. ահաւասիկ ըզպատճէն թղթոյն Պիղատոսի զոր գնեմք 'ի շարս բանից։

Ինքնակալիդ Սեբաստիա փառաւորի և հզօրի Տիբերիա կայսեր, 'ի Պիղատոսէ դատաւորէ կողմանց Արեւելից Պաղեստինեայ և Փիւնիկեայ, արքայի խնդալ։

Հարկ եղեւ ինձ գրել առ մեծութիւն քո զիրս զայս, որ անկաւ 'ի վերայ իմ 'ի դժնդակ պատահմանէս որում ականատես եղէ։ Քանզի Հրեայք՝ որք ժողովեալ էին յԵրուսաղէմ, մատնեցին ինձ զայր ոմն անուն Յիսուս, որոյ վասն աւետիս ունէին հարքն նոցա, եթէ առաքէ Աստուած զսուրբն իւր յերկնից, որ և թագաւոր կոչեսցի Իսրայէլի, զոր խոստացեալ էր Աստուածն երկնից 'ի ձեռն կուսի յերկիր առաքել, որ 'ի դատաւորութեանս իմում 'ի հրէաստանի բազում աքանչելիս արար. քանզի մի 'ի հերձուածոցն՝ զոր դնէին 'ի վերայ նորա, այն էր թէ զչարաթս ոչ պահէ։ Այլ նա այսու լուծանէր, զանդամալոյծս առողջացուցանէր, զկոյրս լուսաւորէր, զկաղս գնացուցանէր, խլից լսել տայր և համերց խօսել։ Այլ և զայր մի մեռեալ չորեքօրեայ կոչեաց 'ի գերեզմանէն և յարոյց 'ի մեռելոց, զայսահարս որ 'ի գերեզմանս բնակէին զդաստացոյց, ըզդեւս հալածեաց, զգօսացեալս, զմիակողմանիս, և զկինն տեռատես բժշկեաց, և այլ բազում նշանս գործեաց, զորս ոչ էր գործեալ մարդոյ կամ լուեալ յաշխարհի, զնա Անանա և Կայիափա մատնեցին 'ի ձեռս իմ. իբրեւ ոչ կամեցայ խաչել զնա, բազում խռովութիւնս և աղաղակս յարուցին 'ի վերայ իմ և քննութիւն արարեալ ոչ ինչ ինչս մահու գտի 'ի նմա, բայց ոչ կարացի հաւանեցուցանել զնոսա. առեալ տարան զնա և խաչեցին, և խաւար կալաւ զամենայն տիեզերս 'ի միջօրէի՝ զի խաւարեցաւ արեգակն։ Եւ յորժամ Յիսուս խաչեցաւ՝ էր օրն Ուրբաթ եւ ժամն վեցերորդ. երկիր շարժեցաւ եւ վէմք պատառեցան, եւ մեռեալք 'ի գերեզմանացն յարեան, որպէս ինքեանք խոկ Հրէայքն վկայեցին. և 'ի խաչէն իջուցեալ թաղեցին զնա, և մատանեաւ իւրեանց կնքեցին զգերեզմանն, եւ եկեալ